ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ
№ 33

ՏԱՐԵԿԱՆ
ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆՆ Է

Թաւրիզում . . . . . . 14 ղրան
Գաւառներում . . . . . 20 ղրան

ԱՐՏԱՍԱՀՄԱՆ

Ռուսաստան . . . . 4 րբ. 50 կ.
Թուրքիա . . . . 50 ղուրշ
Եւրոպա . . . . 12 ֆրանգ
Ամերիկա . . . . 2 տօլար 5 ս.

Յայտարարութիւնների վճարը
Առաջին երեսում տողատեղը 10 շահի
Չորրորդ ,, ,, ,, 5 ,,

ԱՌԱՆՁԻՆ ՀԱՄԱՐԸ 6 շահի

Խմբագրութեան հասցէն՝ Թաւրիզ
ՄԻՏՔ-ի խմբագրութիւն կամ Tauris (Perse)
Rédaction du journal Armén. «MITK»

ՄԻՏՔ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ—ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳՐԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ادارهٔ روزنامهٔ ﴿ میطك ﴾

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

1. Մեզ գրողներից խնդրւումէ գրեն պարզ, մաքուր և անպայման թղթի առաջին երեսի վրայ։
2. Խմբագրութիւնս իրեն է վերապահում իրաւունք՝ ստացուած յօդուածները փոփոխութեամբ և կրճատումներով հրատարակելու.
3. Մենք մերժում ենք „ւէ“ ի և „վ“ ի ուղղագրական հերձուածը և մեզ ենք վերապահում իրաւունք՝ ստացուած նիւթերը տպել մեր ընդունած ուղղագրութեամբ —ու—ով։
4. Չտպուած կարճ յօդուածները չեն վերադարձնւում։ Ուղարկուած և չտպուած երկար նիւթերը յետ ստանալու համար պէտք է ուղարկել պօստի ծախսը։
5. Չի տպւի ոչ մի յօդուած եթէ դա կեղծ անուան հետ միաժամանակ չի կրի յօդուածագրի անուն ազգանունը։
6. Բաժանորդները թերթ չստանալու դէպքում շուտով տեղեկացնելու են մեզ՝ հակառակ դէպքում խմբագրութիւնս իրեն զերծ է համարում պատասխանատւութիւնից։
7. Չտպուած յօդուածների համար խմբագրութիւնս բացատրութիւններ չի տալիս։
8. Հասցէները փոխելու համար պէտքէ մեզ ուղարկել 2 ղրան 10 շահի։

№ 33 | 1912 Թ. | ՇԱԲԱԹ 24 ՆՈՅԵՄԲԵՐ 1912 Թ. | № 33

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Ատրպատականի Ռուսական Գեներալնի Կօնսուլատը պատիւ ունի ներկայ յայտարարութեամբ ծանուցանելու, որ Բէնդէր-Բուշիրի Գեներալ Կօնսուլ պարոն Պասէկը լոյս է ընծայել Պարսկաստանի նոր աշխարհագրական քարտէզը, միանգամայն բարեփոխուած և լրացրուած՝ համեմատութեամբ նախկին լոյս տեսածների։

Վերոյիշեալ քարտէզները ծախւում են այս տեղի Գեներալնի Կօնսուլատի կանցելեարում հետևեալ արժէքներով։

Հատը 5 րուբլի Ռուսերէն լեզուով գրուածը, հատը 5 Թուման Ֆրանսերէն կամ Պարսկերէն գրուածը։

Իւրաքանչիւր քարտէզի հետ տրւում է մի ցուցակ այբուբենական կարգով կազմուած։

Ante Portas

—

Բալկանեան չորս փոքր ազգերի հզօր դաշնակցութիւնը մի ամսեայ կարճ ժամանակում Տաճկաց դէմ տարած մի շարք փառաւոր յաղթութիւններով ցրեց շատ նախապաշարումներ տաճկական բանակի անխոցելիութեան և անպարտելիութեան մասին։

Եւրոպական խաղաղութեան վրդովման կուսախնձոր Տաճկաստանը այսօր յետ է շպրտուած Եւրոպական Տաճկաստանից մինչև Պօլսոյ պատերի տակ, ուր կանգնած է բուլգարական յաղթական բանակը։

Այսօրուայ յաղթողները երէկ Տաճկաստանի հպատակներն էին։ Ռուսական սուինների շնորհիւ ազատուելով Տաճիկ բռնակալութիւնից և բռնելով քաղաքակրթութեան ուղին՝ նոքա կարճ ժամանակում ամբարեցին անխորտակելի մի ոյժ, որով քաղաքակրթութեան թշնամի Օսմանցոց ամօթալի պարտութիւններով բերին լցրին Պօլիս։

Երէկուայ ամբարտաւան Չարդարը այսօր դարհուրագին շշնջում է իր թշնամիների մասին.

Ante Portas

Եւ իրօք Բոլգարները կանգնած են Պօլսի մուտքերի առաջ և թելադրում դարերի մարդախոշոշին ստորացուցիչ պայմաններ։

Ասել և այժմ էլ կրկնում ենք՝ ամենքը հպարտանում են դաշնակիցների յաղթութիւններով և հրրճուում Տաճկաց տապալմամբ։

Ի՞նչ տուեց աշխարհին կամ ի՞նչ անուն թողեց Օսմանցին վեց դարեան արիւն արտասուքի չարայիշատակ իր տիրապետութ. յետոյ

Թող յետադարձ մի ակնարկ ձգի իւր անցած ճամփի վրայ տեսնելու թէ ի՞նչ է թողել նա իւր յետևում։

—Եփրատի ափերից մինչև Բուդափեշտ նա ստեղծել էր մի կատարեալ սպանդանոց, գերեզմանատուն։ Բայց լսենք աւելին։

Յօշոտուած բիւրաւոր դիեր, տասնեակ բիւրաւոր ջարդուած կառափներ, արեան բաղնիսներ, շէն գիւղերի ու քաղաքների սրբատամորմոք մոխիրներ, քրիստոնեայ կանանց լիրբ բռնաբարումներ, մանկանց շամփրումներ ու խորովումներ, խղճի ու կրօնի ան ծայր անարգանք, միլիօնաւոր «գեաւուրների» անլուր ստորացումներ։ Ահա տաճկական տիրապետութեան ստորոգելիքներն ու անկապտելի առաքինութիւնները։ Ահա նորա անցածը, ահա նորա թողածը։

Վեց դարեան ջարդերի սև էջեր, բիւրաւոր մայրերի անէծք արտասուքով օրհնաբանուած։

Վեց դար ապրելով կողք կողքի Եւրոպայի հետ՝ Տաճիկը ոչինչ չսովորեց նրանից և մնաց նոյն բիրտ, վայրագ ու ջարդարար տարրը։ Նա սարսափի, մահու և աւերմունքի թագաւորութիւնից բացի չբերեց և չստեղծեց ոչինչ և ընդհակառակը բարբարոսօրէն խորտակեց այլոց կուլտուրան։ Եւ այսօր նա շատ բնական կերպով կրում է իւր դարևոր ոճրագործութեանց պատիժները։

Պատմութեան տեղեակ մարդիկ անշուշտ կյիշեն քրիստոնեայ արևմուտքի սարսափը, որ արտայայտում էր եկեղեցոյ զանգերի ղօղանջիւնները լսելիս։

—Տէր, պահիր մեզ Թուրքից և սատանայից։ Սատանայից անգամ աւելի զարհուրելի է եղել քրիստոնեայ և կուլտուրական աշխարհի համար Տաճիկը։

Ահա այս հասկանալի պատճառներով մենք ովսաննա ենք կարդում Բալկանեան յաղթական դաշնակիցներին։ Եթէ Եւրոպացոց մնար, ապա մի դար ևս այդ պատուհաս Տաճիկը պիտի մնար Եւրոպայի կրծքին իբր կօշմար։

Այդքան բարբարոս հակումներով օժտուած մի ազգ բարոյական ոչ մի իրաւունք չունէր իշխելու կուլտուրական տարրերի վրայ։ Եւ այդ իրաւունքից զրկում է Տաճկին Բալկանեան դաշնակցութիւնը, որի բանակները Չաթալջան են ռմբակոծում և Մեծ Թուրքին հրամայում.

—Յետս անդրէն դէպի Ասիա։

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ

—

Ի՞նչու ուշացաւ

Հոկտ. 27-ին մենք լոյս ընծայեցինք «Միտք»-ի № 32-ը։ «Կործանաբար Քաղաքականութիւն» վերնագրով նորա առաջնորդողում մենք դիտողութիւններ էինք արել միապետութեան մասին և ապա ծանրացել այն փաստների վրայ, որոնք պաշտպանում են քա...ական կուսակցութիւնների իրար հալածելուց։

Թերթի հրատարակութիւնից երկու օր յետոյ, մենք տպարանատէրից ստացանք մի երկտող թէ Շօջա-էդ-Դովլէն թերթը ղրկելով թարգմանութեան պահանջել է թարգմանել և իրեն տալ։

Մեր կցադմունքներից վերջ, մի օր յետոյ, դիմեցինք թարգմանին և հարցրինք ի՞նչ յօդուածի թարգմանութիւն է պահանջւում։ Պատասխան ստացանք դիմել հէնց իրեն «հաղրաթը աշրաֆին»։

Նոյն օրը երեկոյեան ժամը եօթ և կէսին ներկայացանք «հազրաթը աշրաֆին» և տուինք բացատրութիւններ մեր գրածների, ինչպէս և Բալկանների պատերազմի մասին։

Մինչ մեր բացատրութիւնը տալը և այդ կողմից ապահովուիլը, մենք կորցրինք երեք օր, որով այլ ևս ուշացաւ «Մտքի» հերթական համարի լոյս ընծայումը։ Այս մէկ։ Միւս կողմից էլ մեզ վրայ ծանրացել էին անհամար պարտքեր, որոնք... դժուար էին դարձնում թերթի հրատարակութիւնը։

Ցարդ մենք պարտ ենք մնացել տպարանատիրոջ և թղթավաճառին բաւական մեծ գումար։

Սրանից բացի մենք մեր սուղ միջոցներից-մեզ անհագին զրկանք պատճառելով-թերթի վրայ դրել ենք 115 թուման. և դրանցից աւելին անել և տանել չկարողանալով մենք, գրեթէ, մի ամսով ուշացրինք «Մտք»ի հրատարակութիւնը։

Մենք յոգնեցինք թէ պօստարկըղերով և թէ առանձին նամակներով և անգամ հեռագրով յիշեցնել և խնդրել մեր բաժանորդներին, որ բարի լինեն իրենց պարտքը հատուցանել։ Բայց զո՜ւր...

Սակայն քաղաքիս բաժանորդների ու համակիրների աջակցութեան խոստման վրայ վստահացած՝ շտապում ենք հրատարակել «Միտքը», որի առ ժամ ուշանալը ցաւ էր պատճառել նորա համակիրներին։ [1])

ՊԱՏԵՐԱԶՄԸ ԵՒ ՊԵՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ

—

✱«Միրը» հաղորդում է, որ բոլգար զօրքերը մինչև օրս Թիւրքերից ձեռք են գցել 350 վագոն ու վեց շոգեմեքենայ։

✱Բօլգարական գործակալութիւնը կտրականապէս հերքում է օտարազգի լրագիրներում Հռոմից ուղարկուած հեռագիրների անուան տակ տպուած այն տէնդէնցիօզ տեղեկութիւնները, որոնք իբր թէ հիմնուած են բօլգարական գործողութիւնների ժամանակ ներկայ եղած մի ռումին օֆիցերի հաղորդագրութիւնների վրայ, թէ իբր կորցրել են բօլգարները աւելի քան 90,000 մարդ, իբր նրանց մէջ համաճարակներ են և ուտեստեղէնի պա-

[1]) Շարունակութիւնը տես չորրորդ երեսի երկրորդ սիւնեակը.

կասութիւն։ Այդ տեղեկութիւնները չարամիտ յերիւրանքներ են։

❋Դեկտեմբերի 3-ին զէնքի են կանչւում 1914 թուին պատկանելիք երիտասարդ զինուորացուները։

❋Կուռող կողմերի լիազօրների ժողովնե րը տեղի են ունենում Դանէվի նախագահութեամբ։ Լիազօրների երէկուայ խորհրդակցութիւնը տեւեց ամբողջ օրը մինչև ուշ երեկոյ։ Այսօր առաւօտ լիազօրները նորից ժողովուեցին։

❋Սերբիական զօրքերը Օրխիդայից Վալօնա գնալու ժամանակ ճանապարհին գրաւել են Էլբասանը, Տիրանը և Դրաչուն։

❋Մակեդոնիայի սերբերից գրաւուած տեղերում կազմակերպուեցին 11 սերբիական շրջաններ։

❋Ադրիանապօլսի տակ սերբիական զօրքերի գլխաւոր մասը գտնըւում է Մարիցայի ձախ ափի և Տունջէի միջև։

❋Բիտօլիայում սերբիական իշխանութիւնների մօտ են գալիս պատգամաւորութիւններ Մակեդոնիայի այն տեղերից, որ դեռ սերբերը չեն գրաւել, խնդրելով զօրք մտցնել և կարգ ու կանոն մտցնել ։

❋Իշխանուհի Ելենա Պետրովնան մեկնեց Վրանիա։

❋Սերբ մինիստր Ստոեանովիչը յայտնեց, որ Սերբիան Ադրիատիկ ծովափին նաւահանգիստ ձեռք բերելու համար կըռուայ իր վերջին զինուորին անգամ։ Պատերազմը Աւստրիայի հետ, մինիստրի կարծիքով, անխուսափելի է։

❋Վիէննայում խօսում են, որ Վիլհելմ կայսրը Ֆրանց Ֆէրդինանդի հետ խօսելիս խոստացել է նրան պատերազմ ծագելու դէպքում աջակցել իր զօրքի բոլոր ուժերով։

❋Կ. Պօլսում աւստրիական դեսպանը այցելեց պրիմիէր Քեամիլին և յայտնեց, որ աւստրիան առաջարկում է Թիւրքիային զինուորական դաշնակցութիւն խոստանալով աւստրո-ռուսական պատերազմի դէպքում վանել բօլգարական զօրքը Ադրիանուպօլսի և Չաթալջայի մօտից, որի փոխարէն Աւստրիան պահանջում է Թիւրքիայից ուժեղացնել ռուս-թիւրքական սահմանը Կովկասում։ Այդ առիթով արտակարգ կերպով գումարուեց մինիստրների խորհուրդը։

❋Թիւրքաց մինիստրների խորհուրդը վճռեց խզել խաղաղ բանակցութիւնները Բօլգարիայի հետ և սաստկացնել պատերազմական գործողութիւնները։

❋Պարիզում հեռագիր է ստացուել, Միջագետքում 40000 արաբ զինուել են և շտապում են օգնութեան թիւրքերին։

❋Անգլիական, աւստրիական, ֆրանսիական և ռուսական հիւպատոսները Ադրիանապօլսից իրանց դեսպաններին նոյեմբերի 13-ին անթել հեռագրով ուղարկեցին միատեսակ բովանդակութեամբ տեղեկութիւններ. հաստատում են զինուորական իշխանութիւնների այն տեղեկութիւնները, թէ բօլգարները յամառօրէն ռմբակոծում են քաղաքը. օտարազգիներից զոհեր չկան։

❋«Մ. և Ա.» կոմիտէի անդամ նախկին պատգամաւորները փորձեցին Ակրի (Պալէստին) իշխանութիւնների դէմ գրգռում առաջ բերել։ Զօրքերը վերահաստատեցին կարգ ու կանոնը։

Թիւրքիան գնում է Չիլիի դրէդնօուտը

❋Թիւրքական պարլամենտը և սենատը վերացուեցաւ և փոխարինւում է պետական խորհրդով՝ լայն ֆունկցիաներով։

❋Գերմանական օֆիցերները մեծ թւով գործում են թիւրքական կըռւող բանակում։

❋Բօլգարների թնդանօթների գընդակներից Ադրիանապօլսի մի մասը հրդեհի մէջ է։

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՄԵԾ ՅՈԲԵԼԵԱՆԸ ՆՈՐ ՋՈՒՂԱՅՈՒՄ

15 Հոկտ. Նոր-Ջուղա

Ամսոյս 5-ին, թեմիս առաջնորդական խորհրդարանի հրաւէրով ազգային առաջնորդարանում կայացաւ մի ժողով, բաղկացած Նոր-Ջուղայի եկեղեցիների վարչութիւններից և հոգաբարձական ու ուսուցչական կազմից, խորհրդակցելու Հայ տպագրութեան 400-ամեայ և տառերի գիւտի 1500-ամեայ յոբելեանը ս. Թարգմանչաց տօնի օրը կատարելու մասին։ Ժողովն ընտրեց եօթն հոգուց բաղկացած մի յանձնաժողով, յոբելենական հանդէսի մասին հոգալու։

Ժամանակը սուղ լինելով հանդերձ, այնուամենայնիւ յանձնաժողովը հնար եղածին չափ աշխատել էր հանդէսը դարձնել շքեղ ու վայելուչ։

Ամսոյս 13-ին, յոբելենական հանդէսի օրը, Ամենափրկչեան վանքում խուռն բազմութեան ներկայութեամբ մատուցուեց պատարագ, որից յետոյ կատարուեց հոգեհանգիստ Հայ գրականութեան հանգուցեալ գործիչների յիշատակին։ Նոյն օրը հասարակութեան մէջ բազմաթիւ օրինակներով ձրի բաժանուեց-Մեծ յոբելեանի առթիւ տպագրուած -«Նոր-Ջուղայի Ամենափրկչեան ս. վանքի տպարանը 1640-1912» գրքոյկը, որ տալիս է ծանօթութիւններ յիշեալ տպարանի մասին և ցոյց է տալիս ԺԷ. դարից մինչև մեր օրերը լոյս տեսած գրքերի ցուցակը և գործերը։

Նոյն 13-ի երեկոյեան ազգային կենտրոնական դպրոցի սրահում տեղի ունեցաւ երեկոյթ-հանդէս։ Դեռ յայտարարուած ժամանակից առաջ ամբողջ սրահը բռնուած էր հանդիսատես հասարակութեամբ, այնպէս որ տեղ չը լինելու պատճառով հասարակութեան մի մասը ստիպուած էր բակում մնալ։

Ժամը 7-ին սկսուեց հանդէսը երաժշտութեան նուագածութեամբ, որից յետոյ երգում էր դպրոցական երգեցիկ քառաձայն խումբը մէջ ընդ մէջ արտասանութեամբ։

Ուսուցիչներից խօսեցին տառերի գիւտի և հայկական տպագրութեան մասին, սակայն ծովացած ժողովրդի աղմուկը թոյլ չտուեց շատ բան լսելու։ Պատշաճ կերպով զարդարուած բեմի վրայ ցուցադրուած էին հին տպագրուած գրքեր, որոնցից եղան հատուածների ընթերցում։ Ցուցադրուած գրքերի միջից աչքի էր ընկնում Նոր-Ջուղայի Ամենափրկչեան վանքի տպարանի անդրանիկ տպագրութիւնը 1640 թ. «Վարք հարանց» անունով։

Երեք ժամ տեւող հանդէսից յետոյ, հասարակութիւնը դուրս եկաւ շքեղ կերպով լուսավառուած բակը, ուր կատարուեց ճոխ հրախաղութիւն և ուրի ժամանակ նուագում էր երաժշտական խումբը։

Ուշ գիշերին հասարակութիւնը ցրուեց, տանելով իր հետ քաղցր տըպաւորութիւն Համազգային Մեծ յոբելեանից։

Հանդիսատես

Հոկտ. 26 Սուլդուզ-Նաղադէ

Օսմանցիք կհեռանան Սուլդուզէն.

Այսօր ասկեարները մեծ շարժման և իրարանցման մէջ են,- հալածելիս կկապէն-կկապոտեն իրենց իրերը և ընկած գիւղերը գրաստներ կըռնեն, կրռնեն, որպէս զի բեռները բարձեն, «փասափուսաները քաշեն» այս տեղէն զոր չկրցին մարսել, տիրանալ։

Ցօղս ցնդեցան այն «ինշահլահ»-ները, որոնցմով ստէպ-ստէպ կօրօրէին ազգաբնակութիւնը և կ'վստահացնէին թէ միացուցած են արդէն իրենց երկրին հետ։ «Ջուր ջանք, անօգուտ վաստակ» և կամ աւելի յարմար, բստ Աւետարանական բանի «բազում աշխատեցան և կալան ոչինչ»։

Ղարափափախ աղաները, ինչ ըսել կուզէ, չափազանց ուրախ են. դհոլ-զուռնան չալել սկսել են և քէֆ կընեն։ Իսկ բայեաթը, այդ անպաշտպան էակը։ Օ՛, մի՛ հարցնէք «դանակ զարնես, արիւն չի ենէր». Թախիծը պատեր է երեսին վրայ։ բոլորովին համակուած է վշտով։ Չէ՞ որ դարձեալ իր ճակատի դառն քրտինքի հալալ աշխատանքը վայելելու չէ, ընտանեկան պատիւը պիտի արատաւորուի, անձը վտանգի ենթարկուի։ «Հաշին քերթելու են, հոգին հանելու»... «Ի՜նչ ձիւն տայ գլխուն», «ո՜ր հողը մտնի», ի՜նչ անէ, ո՞ւր փախչի...

Սակայն մենք անկասկած ենք, որ Թաւրիզի հիմնական կառավարութիւնը, կաճապարէ խիստ միջոցներ ձեռք առնել՝ սանձահարելու աղաներուն, մի անգամ ընդմիշտ վերջ տալու անոնց անգութ կամայականութեանց։

Կսիրենք հաւատալ, որ մեր յոյսերն իզերև չպիտի ելնեն, այլ պիտի պսակուեն լիակատար կերպով. և խեղճ, արգահատելի ու ողորմելի հըպատակները «օր ու արև պիտի տեսնեն»։

Օսմանցիք կհեռանան նոյնպէս սահմանագծի միւս վայրերէն ալ։

Բաքէ

Հոկտ. 29 Միանդաբ

Սովուջբուլաղի Ռուսաց Կօնսուլի մուտքն ի Միանդաբ

Ամսիս 12-ին մեծ հանդիսաւորութեամբ ժամանեց աստ Ս. Բուլաղի Ռուսաց գեր-Կօնսուլ պ. Եասսը 10-ի չափ ղազախներով և հետևեալ օրը մեկնեց իր նոր պաշտօնատեղին։

Բարձրաստիճան անձին դիմաւորելու էին գնացել մեծ բազմութիւն թէ ձիաւոր և թէ հետևակ, որոնցից աղա միրզա Յունան խան Սարգիս Տէր-Յովհաննիսեան և պ. Մարգար Տէր-Յակոբեան-գործավարք եղբայրք Նազարբէկեանների կալալով վերցրած Շէխ-Ալի խանի կալուածոց-իրանց հետ առած մի քանի տասնեակ ձիաւորուած բայեաթներ՝ փութացել էին ընդ առաջ մինչև չորս աղաջ։

Շրջանիս մի բուռն հայերը, գըլուխ ունենալով իրանց հովիւ Տէր-Վարդան քահանային, Զղադի գետի եզերքը սիրտ ի խինդ անհամբեր սպասում էին պ. Կօնսուլին, Եւ երբ մօտեցաւ՝ հայերը կարեցին իրենց մատաղը (ուրիշ ազգութիւններ զանց էին առած). քահանան շուրջառաւորուած մի կարճառօտ մաղթանք կատարեց Ռուսաց Օգոստ. Կայսերական Տան, զօրաց և բովանդակ պետութեան համար. հայցելով նաև կար և զօրութիւն պ. Կօնսուլին։

Պրն. Կօնսուլը համբուրեց սուրբ Խաչը և յետ շնորհակալութեան՝ ի մասին հայոց ցոյց տուած այս ջերմ և անկեղծզգացմանց, յայտնեցթէ բազդիմման սրբ. Կարապետ Եպիսկոպոսի՝ առանձին ուշադրութիւն պիտի դարձնէ իրանց և հարկ եղած պաշտպանութիւնը չպիտի զլանայ։

Տեղոյս կեղեքուած, ճնշուած և զրկանաց ենթակայ թշուառ հայերը դարալաքցիք և թաղեաբաղցիք՝ անխախտ հաւատք ունին, որ շնորհիւ քրիստոնէից պաշտպան մեծազօր և ողորմած Կայսեր՝ Կօնսուլը իրենց ծովցաւերին դարման պիտի անէ։

Երեկոյեան մի ժամ մնացած քահանան, գործ. խորհրդի անդամ պ. Ճանիկ. ուսուցիչն և ուրիշ երկու անձ ներկայացան պ. Կօնսուլին բարի գալուստ մաղթելու։ Ընդունելութիւնը խիստ սիրալիր էր։ Պրն. Կօնսուլը հետաքրքրւում էր տեղական հայ-համայնքի վիճակով ու կրթական գործով և նուիրաբերեց յօգուտ միակ լուսոյ տաճարին (Թաւրիզի Հայ. Բարեգործ Մ. ընկ.եան «Արամ-Ղազարեան» դըպրոց) 25 րուբլի, որպէս զի այդ փողով չքաւոր սանիկների ուսման պիտոյքները հոգացուեն։ Ապա հրաժեշտ առնելով ազնիւ Կօնսուլից քաղցր տըպաւորութեան տակ և վառ յոյսերով մեկնեցան, տանելով իրանց հետ անմոռանալի յիշատակներ։

Միհր

1 Նոյեմբերի 1912 թ. Թէհրան

«Համայնական Վարչութիւն» եառլիկով հաչակուած Թայֆայական խմբակը նախքան տեղիս հայ հասարակութեան հաւանութիւնը ունենալու՝ ինքնագըլուխ որոշմամբ վաճառքի էր հանած Դարվազա-Ղազվին թաղի ազգային ուսումնարանի շինութիւնը։ Եւ ապա Հոկտեմբեր 12 թւով մի յայտարարութեամբ ընդհանուր ժողով էր հրաւիրել հաստատելու համար իրենց գործած հրաշագործութիւնը, որտեղ նաև ասուած էր. ,,եթէ ազգայիններից մէկն ու մէկը յիշեալ կալուածքը առնելու ցանկութիւն ունի թող շտապէ յայտնել, այլապէս արդէն առաջարկութիւն անողներ կան օտար ազգերից‘‘։ Ուրախ ենք ասելու որ տեղիս հասարակութիւնը արհամարհելով այդ ապօրէն խմբակի ապօրինի վճիռը, ոչ ոք չգնաց ժողովատեղին։ Խելակորոյս աթոռամոլները նոյն ամսի 17-ին մի ձեռագիր շրջաբերականով նորէն եւ հրաւիրեցին հասարակութեան նոյն խնդրի համար։ Բայց այս անգամ մօտաւորապէս 50 հոգիի չափ մարդիկ գնացին ժողովարան։ Դոցանից 35-ը Դարվազա-Ղազվին թաղեցի էին, իսկ մնացածները Հասանա-

բաղ թաղի աթոռամոլները էին։ Այդ ժողովի նախագահ ընտրեցին ոմն Գեղամ Սարգսեանի, որին մենք առաջին անգամն է որ տեսնում էինք ազգային գործերին խառնուելիս, այն էլ ուսուցչարան ծախելու խնդրում։ Սեղանի վրայ դրուեց հարցը։ Դարվազա-Ղազվին թաղեցիքս ամեն կերպ աշխատեցինք արգելք լինել։ Նախ նրա համար, որ շէնքը ծախելուց յետոյ, գոյացած դրամները պիտի գնան հէնց նոյն ուսուցչարանի անդարձ կորած 16000 թումանի մօտ, մի գումար որ 6-7 տարի առաջ նա ունէր կանխիկ. երկրորդ այժմս էլ նոյն ուսուցչարանում ուսանում են մօտ 30-ի չափ աշակերտ աշակերտուհիք, որոնց ծը նողները անկարող են Դարվազա-Ղազվինից Հասանաբադ ուղարկել, որովհետև մէկ թաղից միւսը 30-35 բոպէի ճանապարհ է։ Իսկ մեր ազգասէր պարոնները ստիպում էին թէ պիտի ծախուի ջհանամ որ չեն կարող ուղարկել։ Դարվազա-Ղազվին թաղեցիք ներկայացրին մի արձանագրութիւն որ գրուած էր մէկ օր առաջ և որի տակ ստորագրել էին 45 ազգայիններ։ Այդ արձանագրութիւնը պարունակում էր իր մէջ կէտեր որոնցով ամեն կերպ պէտք էր արգելք լինել փրկիչներին, որ չծախեն վերոյիշեալ շինութիւնը։ Արձանագրութիւնը երևան գալուց յետոյ թայֆայականները չիմացան ինչպէս յարձակուեն ամեն կողմից Դարվազա-Ղազվինցոց վրայ, անուանելով նրանց շիրաչիք, արբածներ ,խենթեր,և այլն։ Մինչդեռ Թէհրանի ամենապատուաւոր հայերը Դ. Ղազվին թաղում են բնակւում. երբ մենք ուզեցինք ասել որ մենք ոչ արբածներ ենք և ոչ էլ խենթեր, պարոն նախագահը առանց միջոց տալու Դարվազա-Ղազվինցոց՝ արտաքսեց ժողովից, մինչ դեռ մենք երկու անգամ աւելի էինք իրենցից։ Այդ տեղ պ. նախագահը ցոյց տուեց իր կատարեալ ապուշ լինելը, որովհետև Հասանաբադի ուսուցչարանի սրահը իրա հօր ապրանքը չէր, որքան որ իրաւունք ունէր ինքը, նոյն քանով էլ ունէին այն անձնաւորութիւնները, որոնց վոնգեց սրահից մինչ դեռ իսկական ծխականները նոքա են և ոչ ինքը։

Դարվազա-Ղազվինցիք առանց բառ անգամ խօսալու դուրս եկան ժողովասրահից, դրանով կամեցան ասել, որ Համայնական վարչութիւն կոչուած վոհմակի հետ վէճի բռնուել չենք ուզում։ Գալով իրենց տեղերը մի հեռագրով եղելութիւնը նոյնութեամբ յայտնեցին Վեհափառ Հայրապետին։ Թէև Վեհը հոգաբարձութեան միջոցաւ պատասխանել է, սակայն հակառակ մեր քանի անգամ դիմումի հոգաբարձութիւնը յիշեալ հեռագրի պատճէն չկամեցաւ տալ մեզ, ու մենք ստիպուած եղանք վերստին հեռագրելու։ Լսելով որ նոքա էլ ստից հեռագրել են Վեհին իբր թէ արդէն ծախուել վերջացել է ուսուցչարանի խնդիրը, բայց բոլորովին սուտ է, անշուշտ Վեհափառը չի խաբուի այդ պիսիների նորահնար ստերից։

Համայնական վարչութեան նախագահ Կարապետ Մասեհեանցը, իսկական ծխականներին ժողովասրահից վոնդելիս թէև ներկայ՝ բայց Զաքարիի պապանձուն էր պահել։ Իսկ այժմ զանազան դատարկաբանութիւններով հաշտութիւն է առաջարկում Սակայն ինչ վստահութեամբ կարող կը լինինք հաշտուել, ինչ եղան այսօրուայ վաճառքի հանուած ուսուցչարանի կանխիկ 16000 թումանները, ինչ բանի համար է ծախսուել։ Թէհրանի Հայկազեան ուսուցչարանների 7500 թուման տարեկան պիւտճեն ինչ է լինում։

5-6 տարուայ ընթացքում որ մի հաշիւն էք ներկայացրել իգիտութիւն հասարակութեան, որպէսզի կարելի լինի հասկանալ թէ ինչ բանի են ծառայել հասարակութեան խնայած սանթիմները։ Ոչ այլ ևս մենք բոլորովին չենք կարող հաւատալ Ձեզ, նրա համար որ ականատես ենք թէ ինչպէս այդ դրամներով պահում էք որոշ պորտաբոյծների, որոնց դուք ցրելով այս երկրի հայկական շրջանները, պատճառ էք դարձել ու դառնում ահագին հայասպանութեանց ու կողոպուտների։ Դեռ չեն չորացել հոսող տաք արիւնները Ղարաղանցիների և Սուլթանաբադցիների։1)

Ծխական

1) Տարօրինակ անարդարանալի և ահասկանալի է ազգային շէնք ծախելը։ Ժամանակ է վերջապէս հաշիւ տալ իրեն և հասկանալ, որ մենք ունինք կենդրոն, առանց որի նախագիտութեան և թոյլտուութեան միանգամայն անհնար է նման մի հասարակական շէնքի ի վաճառ հանելը։ Ցանկալի էր համայնական խորհուրդը հրապարակով պատճառաբանէր իր արարքը, թերևս մեզ համոզիչ լինէին նրա առարկութիւնները։

Ծ. Խ.

ԳՐԱԽԱՍՈՒԹԻՒՆ

Ձեռնարկ առեւտրական հաշուապահութեան կրկնակի իտալական սիստեմով. կազմեց Նիկողայոս Աբրհամեան. Թիֆլիզ. 1912 թ. էջ 280. գինը 2 ռուբլի։

Հայկական գրականական անդաստանը հաշուապահութեան վերաբերեալ ընտիր և դիւրամատչելի գրաւոր վաստակներից բաւականին զուրկ է։ Մատենագրութեան այս ճիւղի նկատմամբ Տաճկահայոց գրականութեան ասպարիզում 70-ական թուականներին լոյս են ընծայուել մի քանի հեղինակութիւններ, որոնք, դժբաղդաբար, իրանց դժուարամատչելի լեզուի և սեթևեթեալ ոճի, բազմաթիւ օտարաբանութիւնների և բառերի անիմաստ կուտակութիւնների պատճառով՝ հայ հաշուապահութեան տենչանք ու կարիք ունեցող հասարակութեան համար անկապտելի սեպհականութիւն չեն դարձել։ Իսկ Վենետիկի Մխիթարեան հայրերը, որոնք ի սկզբանէ անտի աշխատել են իրանց երկասիրութիւններով գիտութեան բոլոր բարունակներում (отрасль) փայլել, հաշուապահական գրականութեան ասպարէզ են մտել աւելի վաղ ժամանակներից.-1828 թուականին դեր. Իգնատիոս Փափազեանը Վենետիկում հրատարակեց «հաշուետուփար պարզագիր» վերնագիր ունեցող երկասիրութիւնը աշխարհաբար լեզուով, որը կրկնակի հրատարակութեամբ լոյս ընծայուցաւ 1830 թուականին «Հաշուեգիրք հաշուեմատեան» վերնագրով։ Արևմտեան բարքառով հրատարակուած այսպիսի հաշուապահական ձեռնարկները, որոնք խմբագրուել են Ֆրանսիական և Գերմանական նոյնանման գրաւոր երկերի կոյրզկոյրան հետևողականութեամբ, գրեթէ չեն տարածուել ռուսահայ և պարսկահայ ժողովրդի խաւերում։ Այս արժանահաւատ կարծիքին բացարձակ ու գործնական ապացոյց կարող է ծառայել այն պարագան, որ արևելեան հայերի մէջ հաշուապահութեան դասատուութիւնը կատարւում է ոչ թէ տաճկահայերի ջանքերով հրատարակուած ձեռնարկների ղեկավարութեամբ, այլ դասատուների թելադրութեամբ կամ թարգմանութեամբ օտար լեզուներից։

Ժամանակակից մանկավարժութեան պահանջներին բաւականութիւն տուող եղանակներով յօրինուած հաշուապահական դասագրքերով ռուսական գրականութիւնը չափազանց հարուստ է, և բացարձակ կերպով կարող է մրցել ամենաճոխ հաշուապահական գրականութիւն ունեցող ազգերի հետ։ Ընդհակառակը, ռուսահայերը չընայած որ հաշուապահական գործունէութեան ասպարիզում ունեն բաւականին թուով հմուտ մասնագէտ հաշուապահներ յանձինս Մանուէլեանցի,

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԱԶԳԻ ԻՄԱՍՏՈՒԹԻՒՆԸ

I.

Ոչ մի ազգի անցեալը— պատմութիւնը այնքան հարուստ չէ դառն փորձերի, անմիաբանութեանց, արեան և տուժումների սրտաճմլիկ փաստերի նկարագրութիւններով, որքան հայ ազգի պատմութիւնը։

Բայց և ոչ մի ազգ այնքան անխրատ, յամառ և պատմութեան դասերից չօգտուող, ինքնակործան չէ եղել, որքան ինքը հայ ազգը։

Եւ եթէ այսօր նոյն այդ ազգը բեկորների է վերածուել, ցաք ու ցրիւ և տարագիր է եղել իւր հայրենիքից, կամ ըստորուկ իւր պապերի ազատ երկրում, այդտեղ քիչ պատճառ չէ ունեցել հայկական յայտնի կամակորութիւնը կամ պատմութեան դասերից չօգտուիլը։

Ուրիշ խօսքով, ոչ ոք այնքան չէ եղել մեր թշնամին, ոչ ոք չի եղել մեզ կործանողը, քան եթէ մենք ինքներս։

Փաստեր էք ուզում։ Վերցրէք ամբողջ հայոց պատմութիւնը։ Աւելի հեռուն մի գնացէք։ Վերցրէք մեր նորագոյն կեանքի հայ յեղափոխութեան պատմութիւնը։ Լինելով անգամ անգամ՝ մի որևէ կուսակցութեան, սառն և անաչառքննութեան ենթարկեցէք այդ փառահեղ և փառազուրկ յեղափոխութիւնը և դուք կյանգէք տխուր եզրակացութեանց և կըգիւտագործէք հայկական վերոյիշեալ յայտնի գծերը։

Նախ՝ խորը չուսումնասիրուեց մեր ժողովրդի դրութիւնը։ Նա լաւ չնախապատրաստուեց, չզինուեց և յանկարծ այդ անզէն ու անպատրաստ ժողովրդին մենք արձանացրինք Օտտոման կայսրութեան թնդանօթների ու սուլիների առաջ։

Հետևանքը։

— Հետևանքը հայկական գերեզմանը, կամ 300,000-ի ջարդը։

Ամենքը գիտեն, որ յաղթական Ռուսաստանը չկարողացաւ վերջին Ռուս-Տաճկական պատերազմում իր յաղթողի իրաւունքը պահել։ Նրա զէնքերի նուաճումները սանկցիա ստացան Բեռլինի վեհաժողովում միայն։ Այդ նշանակում է, որ առանց Եւրոպական համաձայնութեան ոչ ոք իր յաղթութեան պտուղը չի կարող լիովին վայելել։

Չնայած պատմութեան այդ յայտնի դասին՝ մեր յեղափոխութիւնը գնաց սխալ ճամպով։ Մենք հաշուի չառանք եւրոպական concert-ը և, որ վատթարն է, իբրև contre կողմ դուրս եկանք Ռուսիոյ ե այդ խելառութեան համար էլ, որպէս յիշեցինք, տուժեցինք 300,000-ով։ Զուգեցինք ըմբռնել, որ առանց մի երրորդի պաշտպանութեան, մեր դատն ու թափած արիւնը ձախողուած է։ Մենք մոռացել էինք Բալկանների ազատութիւնը և Ռուսական պաշտպանութիւնը այդ հարցում։ Մենք տուժեցինք ոչ միայն նրա համար որ բարեկամ չունեցանք, այլ որ թշնամիներ ստեղծեցինք և դարձանք Տաճիկ թնդանօթների մսէ կերակուրները։

Գոնէ 300000-ի փչացումը մեզ դաս պէտք է լինէր փոխելու մեր գործելակերպը։ Սակայն մեր գործիչները այդ իմաստութիւնը չունեցան։

Գում Գափուի, Բաբը Ալիի, Կարնոյ, Սասնոյ և Զէյթունի հնչակեան փառահեղ ցոյցերից, Մայիս 11-ի մէմոռանդումից յետոյ, երբ հայ դիակները ծածկեցին հայոց դաշտերը, պէտք էր արդէն խրատուել։ Պէտք էր խղճալ թշուառ Տաճկահայութեան։

Բայց ընդվզեց հայկական անսասան յամառութիւնը և վիժեցին բանկ Օտտոմանի, փքուռոյց Խանասորի, Սասնոյ երկրորդ բռնազբօսիկ ապստամբութեան և այլ անմիտ շարժումները ե կրկին աւելացան հայ դիակներ, կրկին մոխիր հայրենի կիսաշէն օջաղում և անիծեալ արտագաղթ։

Առաջին դէպքերից յետոյ երկրորդ շարժումներն անտեղի, աւելորդ և իսպառ վնասակար էին, որովհետև Եւրոպայում արդէն ստեղծուած էր աննպաստ դրութիւն դէպի հայկական հարցը։

Սակայն հայկական տաք գլուխները չհասկացան այդ բոլորը։ Ձխօսեց կամ թոյլ չտուեց որ խօսի ազգի իմաստութիւնը։ Եւ բոպական գեղեցիկ վիլլաներում օրօրուողների պատուէրներով շարունակում էր «փրկուել» հայրենիքը։

Ով իւր կարծիքն էր յայտնում, ով մեր յեղափոխականներին քարոզում էր շրջանկատ լինել և ընտրել յարմար բոպէ մը կրտում էր «մատնիչ, դաւաճան, հակայեղափոխական, բռնակալի ձեռները լիզող» և այլն մակդիրներով։

Այդ հերիք չէր, մենք սկսեցինք նիզակներ ճօճել Եւրոպական պետութեանց և յատկապէս Ռուսիոյ դէմ։ Մենք մի փառաւոր դաս առանք այդ մեծախօսութեանց համար հայ թրքական կոտորածներով Կովկասում։ Սակայն էլի մնացինք անխրատ, ըմբոստ, ցուցամոլ և հպարտացանք մերոնցով «տաքներով» և մաղէրներով և աշխարհ թընդացրինք մեր ամբարտաւան և «յոյժ սոցիալիստական» ճառերով էջմիածնի սահմանադրական ժողովում։

Մեր հայկական այդ Դոնքիշոտութեան համար նորէն մեզ փառաւոր մտրակեցին։ Մեր իսկ օրը ցերեկով կատարած յիմարութեանց համար մեր փրկիչներին բանտերի բնակիչներ դարձրին, սակայն մենք զըրպարտեցինք անմեղներին «մատնչութեան» մէջ, չխոստովանեցինք մեր սխալները։

Կիսալուսնի երկրում սահմանադրութիւն հռչակուեց։ Եւ ահա մեր փրկիչները սլացան արեան այդ երկիրը, համբուրուեցին հայութեան այդ գերեզմանափորների հետ, իսկ միւս կողմից չնաշխարհիկ Կուունկին—Ակնունուն թոցրին Ամերիկա հասարակական կարծիք և ժողովներ կազմելու ընդդէմ «Ռուս բռնակալութեան»։ Հայկական ծաները թեփրել էին ուզում ռուսական արծիւը։ Միամիտներ։ Ծովերի թագուհին-Անգլիան—օդի հրամանատարը — Ֆրանսիան, յանուն իրենց պետական շահերի և ազգային գոյութեան՝ դաշնակցում են ռուս պետութեան հետ, իսկ մեր խելօքները տաճկաց համար քաղաքական կոմիվոյաժորութիւն են անում և հայկական դագանագնեերով սպառնում ռուս սուլիներին։ Եւ այդ կլօունութիւնը յօգուտ տաճկաց կատարւում էին այն ժամանակ, երբ դեռ Կիլիկիոյ 20000 անմեղ հայերի արիւնը չէր չորացել։ Երբ հողային հարցը դեռ բաւարարութիւն չէր ստացել։ Սակայն այդ բոլորը պէտք էին մեր Ցուդաներին՝ համբոյրներ դրոշմելու Ջարդարարների պիղծ շրթունքներին, որպէսզի մէպուսութեան ամսական 50 ոսկիներն ստանան, պարլամենտում բերանները փակ պահելու պայմանով։ Ա. Տ. Վ.

Գասպարեանցի, Աբրհամեանցի, որոնք Կովկասում ունեն հաշուապահական դասընթացքներ, այսուամենայնիւ զուրկ են մնացել իրանց մայրենի լեզուով կազմուած դիւրամատչելի դասագրքերից, որոնք կարող են խոշոր ծառայութիւն մատուցել թէ վաճառականական դասակարգին և թէ ինքնակրթութեամբ պարապուող հայ երիտասարդներին։ Ահաւասիկ այս ակնյայտնի պակասութիւնը լրացնելու համար հանդէս է եկել իւր կազմած «Ձեռնարկ առևտրական հաշուապահութեամբ» Ն. Աբրհամ. որի գիրքը իւր տեսակում առաջինն էհորաչքի էընկնում բազմաթիւ առաւելութիւններով, պարզ եղանակով (méthode claire), դիւրին ու բնական հետևողականութիւններով (conséquences, déduites), դիւրամատչելի լեզուով, հասկանալի բացատրութիւններով և օգտակար ու գործնական վարժութիւններով, կարող է զգալի ծառայութիւն մատուցանել հայ վաճառականին, հաշուապահին, ուսուցչին, դպրոցական հաստատութիւններին, որտեղ աւանդւում է հաշուապահութիւնը, և այն անձանց, որոնք ուզում են ինքնակրթութեամբ սովորել «կրկնակի իտալական հաշուապահութիւնը»։ Միակ թեթև պակասութիւնը որ այս երկասիրութեան էջերում հանդիպում ենք, այն է, որ հեղինակը գիրքը շատ է ենթարկել օտար բառերի, օր՝ ակտիւ, պասիւ ուգօլնիկ, մաթուլ, կրուպչատկա, կրովելնի, դէբէտ կրէտիա, կուրտաժ, ինկասսо, ֆակտուրա, և այլ սոյնանման բառեր, որոնց կարելի էր փոխարինել հայկական համապատասխան բառերով որ կարելի է գտնել մեր հին գրականութեան մէջ, և առաւել Ի-րդ դարուայ մատենագիր Անանիա Շիրակացու չափաբերական գիտութիւններին վերաբերեալ երկասիրութիւններում։ Գրքի սկզբնական էջերում հեղինակը գործ է ածում այսպիսի ասացուածներ, որոնք միանգամայն հայերէն չեն, այլ գործ են ածուում ռուսաց լեզուում՝ «հաշուապահը պարտաւոր է տանել գրքերը միանգամայն կանոնաւոր, շատ վաճառականներ առևտուրը տանում են առանց հաշուապահութեան, տանում են իրանց գործերը»։ Սակայն սրանք երկրորդական նշանակութիւն ունեցող թերութիւններ են։ Գիրքը տպագրուած է շատ մեծ խնամքով, մաքուր ու դիմացկուն թղթի վրայ, գինը մատչելի է։

Լ. Գէորգեանց.

Հայկական կլուբ

Կեանքը վաղուց է փոխուած մեզանում։ Այլ ևս հին փակ և հարեմական կեանքը չկայ։ Պէտք է զգացուում ժամանցի, շփման։ Իսկ ուր խմբուել և ուր տեսնուել։ Այդ բացը լրացնում էր ռուսական կլուբը, ուր այժմ կարծես նախկին ազատ մուտքը չկայ։ Տարիներ առաջ հիմնուեց մի հայկական կլուբ և, աւաղ, շուտով էլ փակուեց։ Ժամանակ է կարծում ենք վերաբանալ այդ։

Կլուբը մեզ համար արդէն մի պահանջ է։

Ամօթ է հայերիս համար վիզը ծուռ այլ կլուբներ գնալ։ Բանանք մերը, ուր ազատ և առանց ճնշուելու մենք ու մեր ընտանիքները կարողանանք մուտք ունենալ։ Սակայն ամենից առաջ մտածենք մի պարտադիր և անխախտ օրէնքի համար, որ նորէն այնտեղ ամեն ինչ հայկական չլինի։ Օրինապահութեան կողմից մենք կարող ենք դաս վերցնել ռուսական կլուբից։ Այնուհետև կմնայ միայն որ նախաձեռնողներ առաջ գան և վստահ ենք, որ այդպիսի անձիք չեն պակասի մեզնում։

---

1) Սորանով մենք խնդրում ենք մեր բոլոր բաժանորդներին և գործակալներին, շտապել շուտով մեզ հասցնել երկրորդ տարուայ բաժնեգները և այս առաջին տարուայ պէս 8-10 ամսով չյետաձգել։

Միայն Թաւրիզը, եթէ կամենայ, մի թերթ կարող է ապահովել։ Կրկնել և նորէն ասում ենք, մենք ֆասից բացի ոչ մի նիւթական շահ չունենք «Մտքի» հրատարակութեան մէջ։ Մենք ուզում ենք մեր ովսանն ծառայել մեր հասարակութեան կարիքներին ու կենսական շահերին և պաշտպանել նորան ցեցերից։ Մեր 10-ամսեայ գործունէութիւնը հրապարակի վրայ է։ Ով համակիր է մեզ, թող և աջակցէ։ Մենք կանենք աւելին։ Այժմ խօսքը հասարակութեանն է և յատկապէս Թաւրիզեցոց։

Քաղաքացիներից շատերը, ինչպէս և մեր յարգոյ վաճառականները կարող են շատ մեծ բան անել մեր թերթի յարատևութեան խնդրում։

Ապացուցենք, որ մենք ընդունակ ենք կուլտուրական մի ձեռնարկ քաջալերել և ապահովել։

Հռչակաւոր գրականագէտ Ա. Զոպանեանը 12 տարի իր «Անահիտը» շարունակելուց և վերջը յուսահատուելուց յետոյ ասաց.

—Բաժանորդագրութեամբ հայ թերթ պահելը Արևելեան հարցը լուծելուց դժուարէ։

Բայց արդէն ահա Բալկանները, գրեթէ լուծեցին պատուհաս Արևելեան հարցը, ուստի յուսանքնաև որ մենք հայերս պատրաստ ենք լուծելու մեր թերթերի անապահովութեան հարցը։

Ինչպէս Եւրոպացիների, այնպէս և հայերիս մէջ շատ թերթեր պահում են հասարակութեան կամ հարուստների նպաստներով։ Ուրախ կլինէինք, եթէ մեր հասարակութիւնը և բարերարները ևս մեզ աջակցէին իրենց բարութեան գանձարանից, որպէս զի ծաւալէինք մեր թերթը և բազմապատկէինք նրա բաժանորդները։

ԼՈՒՐԵՐ

ԹԱՒՐԻԶ

—

✱Նոյեմբեր 14-ին կայսրուհի Մարիա Ֆէօդորովնայի անուանակոչութեան տօնի առթիւ ռուսական զօրքը Մաշխի Մէյդանում կատարեց հանդիսաւոր քայլերթ։ Կանչուած էին բոլոր ռուսահպատակները և հիւպատոսները։ Ռուս քահանան խօսել է ոգեշունչ մի քարոզ և դրուատել Բալկանցոց պատերազմը «բարբարոս տաճիկների» դէմ։

✱Նոյ. 18-ին Արամեան դպրոցի սրահում կայացաւ հասարակական մի ժողով դարման տանելու տաճկահայ ժողովրդի աղեխարշ կացութեան մասին։ Առաջնորդական փոխանորդի ժողովը բացելուց յետոյ, խօսք առաւ Թերթիս խմբագիրը և բացատրեց յարմար բոպէն ձեռքից չթողնել և ընտրել մի յանձնախումբ, որ հարկ եղած դիմումներն անէ ուր որ հարկն է։ Նա յիշեց իբր ընտրելիներ հետևեալ անձանց, պ. պ. Զ. Նազարբէկեան, Զ. Բուդաղեան, Պ. Ասլանեան, Մելքոն Շահբազեան, Նիկոլա Տէր Յովհաննիսեան։ Գաղտնի քուէարկութեամբ ընտրուեցին առաջին չորսը, և պ. Աբիանը, և Խ. Սարաճանը, որոնցմասին եղան այլ յիշողներ։

✱Լսում ենք որ վերջապէս... թեմ. խորհուրդը «բազում քրտնաթոր աշխատանքից» յետոյ հրաժարական է տուել en corpore։ Երկու անգամ ժողովի է կանչուել թեմ. ժողովը. բացի մէկից ոչ ոք չէ եկել։ Այս կատակերգութիւնը ե՞րբ կվերջանայ։

✱Բժշկեան որբերի ուսման թոշակագրաւը հասնում է 100 թուման։ Ամերիկեան օրիորդաց դպրոցի վարչութիւնը պահանջում է շատ իրաւացիօրէն, իսկ յայտնի չէ թէ առաջնորդարանը ե՞րբ վճարելու։

✱Արքի հսկողութիւնը յանձնուած է Շօջա-էդ-դովլին։ Շտապով վերանորոգուում են այնտեղ աւերուած շինութիւնները։

✱Դեկտ. 1-ի գիշերը յօգ. Արամեան դպրոցի նոյնի ուսուցչական խումբը խաղալու է ,,Թագի համար'' պիէսը։ Պատրաստուում են նոր կուլիսներ և համապատասխան զգեստներ։

✱Նոյեմբ. 21-ին «ընծայումն Ս. Ածածնի ի տաճարն» տօնի առթիւ դասերը չեղան Արամեան դպրոցում։

✱Ժամանակի կորուստ չպատճառելու համար, սպասելի է որ փոստայի վարչութիւնը պոստ արկղեր դնի կարևոր թաղերում։

ՍՏԱՑՈՒԱԾ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

1) «Կայծ»-ամսագիր. օրգան Սոց-Դեմ. Հնչ. Կ.Կ. Պօլսոյ Ուսանողական միութեան №-3։

2) «Բազմավէպ» թիւ 7-8-9, Յուլիս-Օգոստոս-Սեպտ. միացեալ համարները.

3) «Հանդէս Ամսօրեայ» թիւ 11 Նոյ.

4) «Կոհակ» № №-40-41 և 42 (Գ. տարի)

5) «Բողբոջ» № 16-17 Մարգուան.

6) Նոր-Զուղայի Ամենափրկչեան Վանքի Տպարանը 1640-1912. Նոր Զուղա 1912 թ. 2 օրինակ.

7) Ամասիա» թիւ 21 Օգոստ. տարի։

[1])Յարդ ստացած չենք «Հանդէս Ամսօրիայի» 10-րդ տեսրը. իսկ փոխանակութեան սկզբից չենք ստացել №-1-ը, որի համար և քանիցս յարգ. խմբագրութեան ուշադրութիւնն ենք խնդրել։ Նորէն ևս յիշեցնում ենք «Հանդէս Ամսօրեայ»ի պատ. խմբագրութեան առաքել մեզ Հանդէսի №-1-ը և №-10-ը։

Խմբագիր-հրատարակիչ՝
Ա. Տ. Վարդանեան

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

„МАГАЗИНЪ ПАРИЖЪ"
PROPRIÉTAIRE J. D. THOMASSIAN
ՓԱՐԻԶ ՄԱԳԱԶԻՆ

Ամեր շաբաթ ստացւում են նոր ապրանքներ առ այժմ ստացուել են հետևեալները։
Կանացի Ձմեռ. Փէշեր, գլխարկներ, կոմպինէզոններ, վերջին մոդի կորսէթներ, ռիդիգիւլներ, տղամարդկանց և կանացի ձմեռային տաք տուֆլիներ, տղամարդկանց, աշակերտների և երեխայի ամեն տեսակի ձմեռային ընտիր գլխակներ, ճաշակաւոր շապիկներ, վզեր, անուշահոտ օդը-կոլոնիներ, դուխիներ, օճառներ, խիստ թարմ շոկոլատ և այլն և այլն, և որոնք ծախւում են խիստ աժան։

ԲԱՑՈՒԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՅՈՒՇԱՐԱՐ

ԹԱՏԵՐԱԿԱՆ-ԳՐԱԿԱՆ-ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ՀԱՆԴԻՍԻ

1912-13 թ. հոկտ. նոյ. դեկտ. յուն. և փետրուար ամիսների ընթացքում տալու է հինգ գիրք, իւրաքանչիւրը բաղկացած 100-120 էջից։ Թերթը պիտի բովանդակէ իր մէջ բացի թատրոնի և գեղարուեստի վերաբերեալ հանրամատչելի յօդուածներից, նաև պիէսներ, յատկապէս գաւառական բեմերի համար։
Ա. գիրքում տպուած է արդէն չորս պիէս, 1. Պահապան Հրեշտակը, պիէս 2 գործողութեամբ 2) Ըստ Պատուիրանաց Թորայի դրամա 1 գործ. 3) Կովկասեան գիշերները դրամա 1 գործ. և Դասախօսութիւն Փառնակէսի՝ նոր վոդէվիլը 1. գործ. նաև մի ոտանաւոր մենախօսութիւն բեմի համար՝ ,,Ռուսկանը''։ Հինգ գրքի գինն է 5. ռուբլի, առանձին համարները 1 ր. 50 կ. դիմել Թիֆլիս Ա. Վրույրին Խոջիվանքի փ. №-5 Тифлисъ Ходживанкская улица №-5 А. Вруйру. Հանդիսին աշխատակցում են մեր գրականութեան բոլոր յայտնի ոյժերը։